ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԺԳ.

Ի ԹԱՂՈՒՄՆ ՏԵԱՌՆ Ի ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒ

Ի ՆԵՐՍԻՍԷ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

կցուրդ

ԱՅՍԱՒՐ է շաբաթ եւ լռութիւն հանգիստ յերկրի.
Զի 'ի գուբ ստուերին նընջէ արքայն եւ թագաւորն ։
Այժմիկ մատուցեալ Յովսէփ առ խաչըն փրկչական
Նայեցեալ մաղթէր տալ զինք ձեռացըն պաշտաման ։
Եկ, Տէր, աղաչեմ ես ամօթով քեզ յանդիման
Որ յապերախտիցըս խաչեցար անպարտական.
Մի զքեզ յըղեցից անդր 'ի մեռեալս որ կան մընան,
Զի փրկական իջումնդ անդր արձակիչ սպասեալ յուսան ։
Համբոյր սիրալիր տայր խոցուածոյն առանձնական,
Հեղոյր զարտասուսն եւ կայր ինքեամբ 'ի պաշտաման ։
Այս է այն Յիսուս որոյ քղանցիւ կոյրք ողջացան,
Սա է միածինն որոյ բանիւ մեռեալք յարեան,
Ինձ է երանի որ զսա պաշտել եղէ արժան,
Ձեռաւք տալ պատել եւ գանձ ունել անզուգական ։
Ի նոր գերեզմանի ածեալ դընէ 'ի հանգըստեան,
Յուսով ըսպասել նախագուշակըն յարութեան ։
Շաբաթ է ասէ Աստուած հանգիստ աշխատութեան,
Որ արարչագործ եղեր էիցս նորոգութեան.
Ի միաշաբաթն ասաց լինել լոյս յարութեան,
Զի մեզ պայծառացոյց դարձեալ գեղով վայելչութեան ։
Կոյսըն Մարիամ հանդէպ նըստէր 'ի հառաչման,
Մերձ 'ի գերեզմանն առ միածինն 'ի տրտմութեան ։
Ո՜վ զիմ տարակոյսս երբ լուծանես զմաւրս նեղութեան,
Որ կամ երերեալ ընդ քո 'ի դիրդ այդ անձկութեան ։
Չիք ինձ որոշել մինչեւ տեսից զաւրն յարութեան.
Քեզ կարաւտութեամբս տացից ողջոյն խաղաղութեան ։
Ընդ սըրբոց կանանցն մըտցուք եւ մեք 'ի տրտմութեան,
Յայս աւրս անձկութեան յորժամ Փըրկիչն 'ի գերեզման ։
Թերեւս արժանի լիցուք 'ի յաւրըն յարութեան,
Ժամանել 'ի փառս եւ մեք Փըրկչին մերոյ անուան ։
Որում աւրհնութիւն միշտ գոհութիւն պատիւ անուան,
Այժմ եւ հանապազ յաւիտենից 'ի յաւիտեան ։

փոխ

Աշակերտ տեառըն Յովսէփ հաւատարիմ
    Անըստգիւտ պահեաց ըզսէր վարդապետին ։
Յորժամ ցըրուեալ ամենեքեան աւտարացան ,
    Եւ գառն 'ի սպանդ պատարագեալ 'ի տարածման ։
Նա 'ի բաց ընդէց զերկիւղըն հրէական ,
    Եւ համարձակ Պիղատոսի եւ յանդիման ։
Տուր ինձ զմարմինն , ով դատաւոր , զանպարտական
    Որ կայ 'ի խաչն անմեղ մեռեալ մարդկան փոխան ։
Որոյ ձայնիւն եղեն շարժեալ էքս ամենայն ,
    Եւ լուսաւորքըդ խաւարաւ դեռ ևս ողբան ։
Զ Յիսուս խնդրեմ, տուր ինձ թաղել 'ի գերեզման
    Զ որոյ ըզփառսըն հընչեցին վէմք և արձան ։
Պիղատոս ծանեաւ ապա զմահն ինքնակամ
    Ստուգեալ ըզնոյն թէ ոչ բըռնի ըստ պատահման ,
Գնա՛, ա՛ռ Յովսէփ, ասէ, ըզսուրբն և ըզարժան .
    Եւ համարձակ ըզնա պատուէ՛ վայելչական .
Անպարտական էր նա մահուդ պատժողութեան ,
    Բայց քո ժըպիրհ ազգըդ գլացող են փրկութեան .
Ահա որոյ վըկայեցի արդարութեանն
    Երկին երկրիւ եղև բանին իմ համաձայն ։
Եկեալ ապա Յովսէփ խաչին ընթերակայ
    Հեղցըր զարտասուր անդր 'ի նայելըն յարակայ ։
Տէր իմ զխա՛րդ մերձիմ 'ի քեզ ես համարձակ ,
    Ի յոր նայել էքս են 'ի յերըր խաւլութեան ։
Բայց թէ ներես սըրտիս իմոյ սիրելութեան
    Եւ տաս կամաւք ըզքեզ ձեռացըս պաշտաման ,
Զի յըղեցից 'ի գուբ ներըքին ըստուերական ,
    Անդ լուծանել զկապեալ հոգիքն 'ի գերութեան ։
Ապա առեալ խընգովք զմարմինն աստուածական
    Սուրբ կըտաւովք պատեաց ըզսուրբըն սրովբէեան ։
Զնորոգիչն եդ 'ի փորեալ 'ի նոր տապան ,
    Եւ դըամբք կընքեաց զշարժեալ կընիքըն հայրական ։
Ո՜վ ահեղ անտանելիս ներգործութեան
    Յորմէ յաղթիմք 'ի սոսկալիս խոնարհութեան ։
Ա՛ի քան ըզմի սաստիկ հրաշիցս անճառութեան
    Տըկարանամք լինել քննիչ և պատմաբան ։

Աստուած 'ի խաչն որպէս մեռեալ դէմ յանդիման ,
Յորմէ իջեալ 'ի գերեզմանն ըստուերական ։
Տէր մեր այսաւր եմք 'ի յերկունս տրտմութեան ,
Որպէս երբեմն սուրբ աշակերտքըն միաբան .
Լալով 'ի յողբս եմք և 'ի սուգ 'ի յերերման ,
Փութա յառնել և տալ ըղձայն մեզ ցընծութեան ։
Այլ ոչ կարեմք տանել զխոնարհ կիրս փըրկութեան
Զոր յաճախեալ ցուցեր անճառ զարմանազան ։
Զքեզ աղաչեմք նախ քան ըզկէտ քո և զսահման
Արի 'ի գբոյդ և ըզմեզ փոխեա յուրախութեան ։
Աւրհնեմք ըզքեզ այժմ և 'ի գուբդ ըստուերական ,
Ուստի շնորհիս մեզ յարութիւն անմահութեան ։
Երկրպագեմք քեզ ընդ մեռեալըդ ամենեքեան
Որոց գնացեր տէր և քարոզ ազատութեան ,
Ի կենդանեաց և մեռելոց 'ի մի բերան՝
Քեզ գոհութիւն միշտ աւրհնութեամբ 'ի յաւիտեան ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Թրիչանկուրի երկու տաճարները :

ՀՆԴԿԱՍՏԱՆ մեծագործութեանց կողմանէ իրաւամբ Եգիպտացւոց ճշմարիտ նախանձորդ կը սեպուի . ինչուան հիմա շատ երևելի շէնքեր ունի՝ որոնց ճարտարապետութեան գերազանցութիւնը ամէնը կը վկայեն ։ Թողունք Սալէմի շրջագայից մէջ գտնուած այնչափ մեծամեծ ամբարտակները , ու հոս Թրիչանկուրի երկու տաճարները միայն ստորագրենք ։

Այս տաճարներէն առջինը բարձր բլրոյ մը վրայ կանգնուած է , ու չորս կողմը բլրոյն վրայ գեղեցիկ խաներ կան՝ որոնց վրայ արևելեան ճոխութիւնը կը փայլի ։ Վսեմ ու փառաւոր տեսք մը ունի , գագաթը ամպերու մէջ կորսուելովը կարծես թէ փոթորիկներն ու կայծակները կ'արհամարհէ . մեծատարած լայնութեամբը սքանչելի երկիր մը բռնած է՝ որ բնութեան գեղեցկութիւններովը զարդարուած է ։ Շէնքին վրայ տեղ տեղ նոր ճարտարապետութեան ոճը կ'երևայ , որ դիւրին է զանազանել , ինչու որ յայտնի դուրս կը ցատքէ նախնի շինուածոյն քով՝ որ մինչև հիմա անվնաս պահուած է ։ Հոս հասնելու ճամբան տեղ տեղ ապառաժներ պատռելով բացուած ու աստիճաններ ձևացուցած է ։ Այս ճամբուն վրայ՝ քովընտի ութսուն ոտք երկայնութեամբ ու անոր համեմատ լայնութեամբ ահագին օձ մը քանդակած է ապառաժ որմին վրայ . որ թէպէտ շատ վիթխարի է՝ բայց խիստ կատարեալ ու համեմատական են իրեն անդամները և շատ ալ բնական ։ Ասոր երկու կողմը վիմափոր աստիճաններ կան ուր որ տեղացիք խուռն բազմութեամբ կը վազեն այս սրբազան հրէշին երկրպագութիւն մատուցանելու . և անշուշտ ասկէց առաջ եկած է այս մեր ըսած տաճարին սրբութեան մեծ համբաւը ։

Իսկ երկրորդ տաճարը , որուն պատկերն է դրածնիս , առջինէն շատ տարբերութիւն ունի շէնքին գեղեցկութեամբն ու փառաւորութեամբը , և մանաւորապէս մուտքին աղուորութեամբը զանիկայ կը գերազանցէ , թէպէտ և